



ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ  
ՀՀ, ք. Երևան, Ծովակալ Իսակովի պող. 24  
հեռ. (+37410) 77-77-10  
էլ. փոստ՝ info@nbe.am

ՀՀ «Արդարադատության ակադեմիա» ՊՈԱԿ  
ՀՀ, ք. Երևան, Փիրումյանների 9  
հեռ. (+37460) 46 00 87  
էլ. փոստ՝ justice.edu.am@gmail.com

## ՓՈԽՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

### ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԵՎ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻ ՄԻՋԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան

«18» մայիսի 2015թ.

«Արդարադատության ակադեմիա» ՊՈԱԿ-ը (այսուհետ՝ Ակադեմիա), ի դեմս Ակադեմիայի ռեկտոր Ռուբեն Մելիքյանի, մի կողմից և «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ը (այսուհետ՝ Բյուրո), ի դեմս Բյուրոյի տնօրեն Արտաշես Ջավադյանի, մյուս կողմից (այսուհետ միասին՝ Կողմեր), կնքեցին սույն փոխըմբռնման հուշագիրը (այսուհետ՝ Հուշագիր), հետևյալի մասին.

#### 1. Հուշագրի առարկան

1.1. Հուշագրով Կողմերը հայտնում են իրենց պատրաստակամությունը՝

1.1.1. հաստատել ակտիվ և արդյունավետ համագործակցություն.

1.1.2. իրականացնել փորձի փոխանակում.

1.1.3. նպաստել արդարադատության համակարգում ներգրավված մասնագետների որակավորման բարձրացմանը՝ լավագույն միջազգային փորձին համապատասխան.

1.1.4. նպաստել Ակադեմիայի և Բյուրոյի միջև կառուցողական և շարունակական համագործակցությանը:

#### 2. Համագործակցության ուղղությունները

2.1. Կողմերը համաձայնվում են համագործակցել հետևյալ ուղղություններով՝

- 2.1.1. Ակադեմիայի ունկնդիրների մասնագիտական պատրաստման և վերապատրաստման նպատակով դատական փորձաքննություններին վերաբերող դասընթացների կազմակերպում.
- 2.1.2. համատեղ մշակված և հաստատված ուսումնական նյութերով դասընթացների անցկացում, ինչպես նաև ըստ անհրաժեշտության Բյուրոյի կողմից տրամադրված սարքավորումների օգտագործում.
- 2.1.3. համատեղ գիտական կոնֆերանսների, սեմինարների և խորհրդակցությունների կազմակերպում.
- 2.1.4. երկկողմանի հետաքրքրություն ներկայացնող ոլորտներում համատեղ գիտական հետազոտությունների իրականացում.
- 2.1.5. ինովացիոն, դրամաշնորհային ծրագրերի համատեղ իրականացում.
- 2.1.6. գիտական նյութերի, գրականության, մեթոդական ձեռնարկների, ուսումնական գործընթացի կազմակերպման վերաբերյալ այլ տեղեկատվության փոխանակում.
- 2.1.7. ըստ անհրաժեշտության՝ հանձնախմբի ձևավորում, որի գործունեությունն ուղղված կլինի Կողմերի լիազորված աշխատակիցների միջոցով փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող հարցերի քննարկմանը, համատեղ գործունեության ծրագրերի մշակմանը.
- 2.1.8. երկկողմանի հետաքրքրություն ներկայացնող գիտագործնական հարցերի, համատեղ իրականացվող աշխատանքների արդյունքների, ինչպես նաև դրանց խոչընդոտող հանգամանքների մասին տեղեկատվության տրամադրում.
- 2.1.9. Ակադեմիայի և Բյուրոյի միջև համաձայնեցված այլ միջոցառումների իրականացում:

### 3. Ֆինանսավորում

- 3.1. Հուշագիրը Կողմերից ոչ մեկի համար ֆինանսական պարտավորություններ չի առաջացնում:
- 3.2. Կողմերը կոնկրետ ծրագրի (ծրագրերի) իրականացման համար, ըստ անհրաժեշտության, կարող են սահմանել ծրագրի ֆինանսավորման ծավալն ու աղբյուրները՝ առաջարկելով կնքել համապատասխան պայմանագրեր և (կամ) համաձայնագրեր:

### 4. Հուշագրի գործողության ժամկետը

- 4.1. Հուշագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:
- 4.2. Հուշագրի գործողությունը կարող է դադարեցվել Կողմերից յուրաքանչյուրի նախաձեռնությամբ՝ ենթադրվող դադարեցման օրվանից առնվազն 1 (մեկ) ամիս առաջ մյուս Կողմի գրավոր տեղեկացմամբ: Այդ դեպքում Կողմերը պարտավորվում են ավարտին հասցնել մինչև Հուշագրի գործողության դադարեցումը չավարտված միջոցառումները:



## 5. Վեճերի լուծման կարգը

5.1. Հուշագրի և դրա հիման վրա Կողմերի միջև կնքվող առանձին համաձայնագրերի կատարման ընթացքում առաջացած վեճերն ու տարաձայնությունները լուծվում են բանակցությունների միջոցով:

## 6. Եզրափակիչ դրույթներ

6.1. Կողմերը համաձայնվում են Հուշագրով նախատեսված ուղղություններով բարեխիղճ համագործակցության համար ձեռնարկել բոլոր միջոցները:

6.2. Հուշագրում փոփոխություններ կարող են կատարվել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ, որոնք համարվում են Հուշագրի անբաժանելի մասը:

6.3. Հուշագիրը կնքված է հայերեն լեզվով, հավասար իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից: Յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

## 7. Կողմերի հասցեները և ստորագրությունները

«Արդարադատության ակադեմիա»

ՊՈԱԿ

հասցե՝ 0054, ՀՀ, ք.Երևան, Փիրումյանների 9

հեռ. (+374 60) 46 00 87

Ռեկտոր

Ռ. Մանթրյան



«Փորձաքննությունների ազգային բյուրո»

ՊՈԱԿ

հասցե՝ 0004, ՀՀ, ք.Երևան, Իսակովի 24

հեռ. (+37410) 77-77-10

Տնօրեն

Ա. Չավադյան

